ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՏԵՂ ՀՐԱՄԱՆ

«6» 12 2014
N 31-Ա
օր.N 1

«16» 12 2014
N
օր. N 351-Ա

Կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայություններ մատուցելու մասին

ՀՀ Կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայությունը և ՀՀ արդարադատության նախարարությունը, ի կատարումն ՀՀ Կառավարության 2011թ. սեպտեմբերի 22-ի N1500-Ն որոշման, ղեկավարվելով «Ազգային անվտանգության մարմինների մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածով և ՀՀ Կառավարության 2002թ հունվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման կարգը հաստատելու մասին» N 48 որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեների կատարման» կարգի 34-րդ կետի պահանջներով ՀՀ արդարադատության նախարարությանը կառավարական քաղաքային հեռախոսակապով ապահովելու և սպասարկելու նպատակով

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՆՔ

1. ՀՀ ազգային անվտանգության ծառայությունը ՀՀ արդարադատության նախարարությանը մատուցում է կառավարական քաղաքային հեռախոսակապի ծառայություններ (այսուհետ «Ծառայություններ»), իսկ ՀՀ արդարադատության նախարարությունը վճարում է այդ Ծառայությունների դիմաց սույն համատեղ հրամանով սահմանված կարգով:

1.1 Սույն համատեղ հրամանով նախատեսված պահանջները տարածվում են կողմերի միջև 2014թ. օգոստոսի 1-ից ծագած հարաբերությունների նկատմամբ:

2. ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐԱՎՈՐՎՈՒՄ Է.

2.1 Ծառայությունների որակյալ, անխափան մատուցում և սույն համատեղ հրամանով նախատեսված պարտավորությունների կատարումը,

2.2 Կապի միջոցների անխափան աշխատանքը և վնասվածքների ժամանակին վերացումը.

2.3 ՀՀ արդարադատության նախարարությունում տեղադրված կապի միջոցների և բաժանորդային գծի անվտանգությունն ապահովող հատուկ միջոցառումներ գաղտնի տեղեկատվության արտահոսքը կանխելու նպատակով,

2.4 Կառավարական կապի միջոցների տեղադրումը, վերատեղադրումը և ծառայությունների մատուցումն ու դրանց հետ կապված աշխատանքների կատարումը ՀՀ արդարադատության նախարարության կողմից վճարման պարտավորության մասին գրավոր հայտ ներկայացնելուց հետո.

2.5 Կառավարական քաղաքային հեռախոսակապի անջատումը, եթե ՀՀ արդարադատության նախարարությունը չի կատարում Ծառայությունների դիմաց ամենամսյա բաժանորդային վճարումը ըստ սույն համատեղ հրամանի 3.4 և 3.5 կետերի:

3. ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐԱՎՈՐՎՈՒՄ Է.

3.1 ՀՀ ազգային անվտանգության ծառայության կապի հանգույցից մինչև իր աշխատասենյակները առանձին մալուխային գծի շարքից դուրս գալու դեպքում վերանորոգման աշխատանքների ծախսերը ըստ կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների.

3.2 Կառավարական կապի միջոցների շահագործման հատուկ պահանջների կատարումը և այն աշխատասենյակների պահպանումը, որտեղ տեղադրված են այդ միջոցները,

3.3 Իր մոտ տեղադրված կապի միջոցների պահպանումը,

3.4 Ծառայության դիմաց բաժանորդային նախորդ ամսվա վարձի վճարումը ոչ ուշ քան մինչև ընթացիկ ամսվա 10-ը համաձայն ՀՀ Կառավարության 22.09.2011թ. N1500-Ն որոշման: Վճարումները կատարվում են ՀՀ դրամով հետևյալ կերպ.

Աղյուսակ 1

№	ՏԵՂԱԴՐՄԱՆ ՎԱՅՐԸ	Կառավարական. քաղաքային կապ	Ընդամենը
1.	ՀՀ արդարադատության նախարարի աշխատատեղյակ	1 x 225 000	225 000
2.	կապի անվտանգություն ապահովող հատուկ ծառայություններ	1 x 100 000	100 000
3.	ընդամենը տարեկան վարձը		
4.			325 000
			երեք հարյուր քսանհինգ հազար դրամ

Աղյուսակ2

№	ՏԵՂԱԴՐՄԱՆ ՎԱՅՐԸ	Կառավարական. քաղաքային կապ	Ընդամենը
1.	ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության պետի աշխատատեղյակ	1 x 225 000	225 000
3.	կապի անվտանգություն ապահովող հատուկ ծառայություններ	1 x 100 000	100 000
4.	ընդամենը տարեկան վարձը		
5.			325 000
			երեք հարյուր քսանհինգ հազար դրամ

1.	Գումարային՝ աղյուսակ 1+աղյուսակ 2	
2.	ենթակա է վճարման՝	
3.		650 000
		650 000
		վեց հարյուր հիսուն հազար դրամ

3.5 Բաժանորդային վճարումների փոխանցումը ՀՀ ազգային անվտանգության ծառայության հաշվարկային հաշվին ամեն ամիս,

3.6 Իր մոտ տեղադրված հատուկ կապի միջոցների վերադարձը ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը՝ տեխնիկապես սարքին վիճակում Ծառայության մատուցումների վերջնական դադարեցումից անմիջապես հետո,

3.7 ՀՀ ազգային անվտանգության ծառայությանը պատկանող կապի միջոցների արժեքի փոխհատուցումն ըստ կազմված համապատասխան ակտի, եթե դրանք կորստի են մատնվել իր մեղքով:

3.8 Ուժը կորցրած համարել ՀՀ ազգային անվտանգության ծառայության և ՀՀ արդարադատության նախարարության առ 22.12.2011թ.N86-Ա համատեղ հրամանը:

ՀՀ ազգային անվտանգության ծառայության տնօրեն

Գ. Հակոբյան

Ք.Երևան 375001, Նալբանդյան 104 ԱՍ
ՀՀ Ֆին. նախ.գործառնական վարչության
հանձնաքների և պետական հիմնարկների բյուջեների
հաշվառման բաժին
հվհհ 01507079
հ/հ 900018301011

ՀՀ արդարադատության նախարար

Հ.Մանուկյան

Ք. Երևան, Հալաբյան 41
ՀՀ Ֆին. նախ.գործառնական վարչության
հանձնաքների և պետական հիմնարկների բյուջեների
հաշվառման բաժին
հվհհ 02506264
հ/հ 900011194132
հ/հ 900011194157

Կառավարական կապի և տեղեկատվության վարչություն _____ հեռախոս 1-99